

## ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՏԱՐԱԾԵ ՅԻՍՈՒԽԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Աստուած կ'ըսէ. Այնուհետեւ, երբ վերջին օրերը գան,  
իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ:

Ըստ Գործք Առաքելոց 2.17



### Գրտեղն...

Դիտէ այս նկարը եւ ըսէ թէ ի՞նչ կը կարծես որ կ'ըլլայ այդտեղ:

Երբեմն ուրիշներու օգնութեան շատ կարիքը կը զգանք: Ուրիշներու օգնութեամբ շատ մը գործեր կրնանք յաջողցնել, որ առանձին պիտի չկարենայինք: Կամ ալ անոնք աւելի դժուար պիտի ըլլային, կամ շատ աւելի ժամանակ խլեին մեզմէ, երբ առանձին ընէինք զանոնք:



Ահաւասիկ Սաղմոսէն համար մը.-

**«Մեր Աստուածը կու գայ. Ան բնաւ լուռ չի՝ մնար» (Սաղմոս 50):**

Այս բառերը կարդալէ ետք, ինչի՞ կրնանք նմանցել Աստուած: Քանի մը նախադասութիւններ գոեցէք ծեր մտածումները արտայայտելու համար:

---



---



---




---

Աստուածաշական պատմութիւնը կարդացած ժամանակ, զույք քանի մը կերպեր, որ Յիսուսի խոստացած Սուրբ Հոգին պիտի օգնէր իրեն եւ իր հետեւորդներուն:

## ՅԻՍՈՒ ԿՈ ՊԱՏԱԷ ՍՈՒՐ ՀՈՎԻՇՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅ ՂՈՒԿԱՍԻ 4.16-22, ԳՈՒԾՔ ԱՌԱՋԵԱՅ 2.14-41



Օր մը Յիսուս Նազարեթ եկաւ, իոն՝ ուր մեծած էր: Ինչպէս միշտ կ'ըներ, այս անգամ ալ ժողովարան զնաց Շաբաթ օրով, եւ ոտքի ելլելով ներկաներուն կարդաց Յին Կտակարանէն հատուած մը:

Անոնք իրեն տուին Եսայի մարգարեին գիրքը: Ան բացաւ գիրքը եւ գտաւ այն բաժինը որ Սուրբ Յոգիին մասին էր: Ան կարդաց. «Տիրոջ Յոգին իմ վրաս է, Ան զիս օժեց որպէսզի աղքատներուն քարոզեմ Աստուծոյ բարի լուրը: Ան զիս դրկեց որպէսզի վշտացած մարդիկը բժկեն, ազատութիւն քարոզեմ բանտարկեալներուն, եւ կոյրերուն աչքերը բանամ: Ան զիս դրկեց վիրաւորները բուժելու, եւ Տիրոջ ընդունելի տարին յայտարարելու»:

Երբ Յիսուս վերջացուց ընթերցումը, գոցեց գիրքը եւ օգնականներէն մէկուն տուաւ ու նստաւ: Բոլոր ներկաները իրեն կը նայէին: Ան ժողովուրդին ըսաւ. «Սուրբ Գիրքին այս բառերը որ դուք լսեցիք, այսօր կատարուեցան»: Այս բառերով Յիսուս ըսել կ'ուզէր ժողովուրդին, որ Սուրբ Յոգին միշտ իր հետ է: Սուրբ Յոգին միշտ կը բուժեր եւ կը հանգստացներ ժողովուրդը:

Քանի մը տարիներ ետք, Պեճտեկոստի օրը, Պետրոս առաքեալն ալ խօսեցաւ Սուրբ Յոգիին մասին ներկայ բազմութեան, այս անգամ Երուսաղէմի մէջ: Պետրոս ըսաւ. «Աստուած ինձի խստացած է, թէ իր Յոգին պիտի թափէ բոլոր մարդոց եւ կիներուն վրայ: Դուք, իբրեւ Աստուծոյ ժողովուրդ, պիտի տեսնեք որ ձեր տղաքն ու աղջիկները պիտի ըսեն այն ինչ որ Աստուծոյ կամքն է իր ժողովուրդին համար:

«Զեր երիտասարդները տեսիլըներ պիտի տեսնեն, եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: Աստուած ըսած է. "Յրաշքներ պիտի գործեն երկինքի մէջ եւ երկրի վրայ.- արիւն, կրակ եւ ծուխ: Արեւը պիտի խաւարի, իսկ լուսինը արիւնի գոյն պիտի դառնայ, նախքան Տիրոջ այդ մեծ օրուան հասնիլը: Եւ բոլոր անոնք որոնք Տիրոջ անունը տան, պիտի փրկուին"»:

Ապա Պետրոս ժողովուրդին յիշեցուց, թէ հակառակ անոր որ Յիսուս Քրիստոս խաչին վրայ մեռաւ, մահը չկրցաւ պահել զԱյն, եւ ԱՆ մեռելներէն յարութիւն առաւ: Ասիկա այնքան մեծ

հրաշք մըն էր, որ Դաւիթ թագաւոր, որ Յիսուսէն շատ առաջ ապրած էր, պիտի որ այդ բոլորը պիտի պատահեին:

Պետրոս ժողովուրդին խոստացաւ, թէ երբ անոնք դառնան իրենց սխալ ճամբէն եւ հետեւին Յիսուսի, պիտի ստանան Սուրբ Յոգիին շնորհներու:

Այնպէս ինչպէս Սուրբ Յոգիին ներկայութեամբ Եկեղեցին իմանադրուեցաւ Յոգեգալուստի օրը, կը շարունակուի մինչեւ այսօր մեր մեծ ծնողներով, մեր ծնողներով եւ մեզմով, իբրեւ անդամները այդ Եկեղեցւոյ: Աստուած խոստացաւ, որ Սուրբ Յոգին մինչեւ վերջ իր Եկեղեցիին հետ պիտի ըլլայ:

### Յոգեւոր բառարան

#### ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այն տեղը, ուր իրեաներ կը հաւաքուին  
Աստուածոյ աղօթելու համար:


#### ՕԾՈՒՄ

Մեկը դրոշմել, Աստուածոյ կողմէ յատուկ պարտականութիւն մը յանձնելով անոր:

Ասիկա ընդհանրապէս կը կատարուի սուրբ իւղ թափելով այդ անձին վրայ:

## Հեռատեսիւր ՀԱՐՁԱԳՐՈՅՑ ՄՐ

Պահ մը այնպէս ենթադրենք որ հեռատեսիլի հաղորդավար մըն ես: Ի՞նչ հարցումներ պիտի հարցնեիր անձի մը, որ քիչ առաջ Յիսուսի հետ էր ժողովարանին մէջ եւ իիմա դուրս կ'ելլէ: Գրէ երեք հաւանական հարցումներ: Անոնցմէ մէկը, նուազագոյն մէկ հատը պէտք է Սուրբ Յոգիին մասին ըլլայ:



## ՊԱՏԱԽԱԽԱՆԵՐԻ ԳՏԱԿԻ

Աստուածաշումը մէկէ աւելի օրինակներ կու տայ մեզի այն կերպերուն մասին, որոնցմով Սուրբ Յոգին կ'օգնէ մեզի եւ կ'առաջնորդէ մեր քայլերը: Կարդացէք իւրաքանչիւր Աստուածաշնչական հատուածը եւ անոր սկիզբը դրուած տառը գրեցէք համապատասխան համարին դիմաց:

1. Սուրբ Յոգին մարդոց կարողութիւն կու տայ արուստեներ եւ գեղեցկութիւններ ստեղծելու:
2. Սուրբ Յոգին կ'օգնէ որ մարդիկ զինուորական յաջողութիւններ արձանագրեն:
3. Սուրբ Յոգին հանգիստ կը պարզեւէ մարդոց:
4. Սուրբ Յոգին ուրախութիւն կու տայ մարդոց:
5. Սուրբ Յոգին մաս կը կազմէ ստեղծագործութեան այս աշխարհին մէջ, որ մենք կը վայելենք:

- ա) Եսայի 63.14
- բ) Դատաւորաց 3.9-11
- գ) Ելից 31.1-5
- դ) Սաղմոսաց 104.24-30
- ե) Գործք Առաքելոց 13.52

## Սուրբ Հոգին մեզի հետ է

Այս դասին Աստուածաշնչական պատմութեան մէջ Յիսուս կ'ըսէ թէ Սուրբ Հոգին օժած է զինք որպէսզի քարոզէ, ժողովուրդին հիւանդութիւնները բուժէ եւ չարէն ազատէ զանոնք: Սուրբ Հոգին Յիսուսի առաքելութեան մաս կը կազմէր: Աստուածաշնչին մէջ ուրիշ հատուածներ ալ կան, որոնք կ'ըսեն թէ Սուրբ Հոգին ի՞նչ կ'ընէ ժողովուրդին կեանքին մէջ:

Այնպէս ինչպէս Յիսուս օծուած էր, մենք ալ կ'օծուինք մեր մկրտութեան պահուն: Քահանան Սուրբ Միւռոնով կ'օժէ մեր ճակատը, աչքերը, քիթը, բերանը, ականջները, սիրտը, կրնակը եւ ոտքերը: Այս ըրած ժամանակ, քահանան կ'ըսէ. «Յիսուս Քրիստոսի այս կնիքը»: Բոլոր Եկեղեցի Եկողները կ'աղօթեն որ մենք Աստուծոյ կանքին համաձայն ապրինք: Անոնք կ'աղօթեն որ մենք ալ Յիսուսի օրինակով ուրիշներուն օգտակար ըլլանք:

Յետոյ մեզի կը հագցնեն ճերմակ հագուստ եւ խաչ կը կախեն մեր վիզէն: Այս օծումը Սուրբ Հոգիին կնիքն է որ մեզի կը տրուի այդ պահուն եւ մեզի հետ՝ կը մնայ մինչեւ մեր կեանքին վերջը, որպէսզի Աստուծոյ զաւակ դառնանք:

Կարդացէք **Բ. Կորնթացիներու 1.22** եւ ամբողջացուցէք ստորեւ դրուած նախադասութիւնը տրուած բառերը օգտագործելով, եւ ապա բաղդատեցէք Աստուածաշնչի համարին: Ի՞նչ կ'ըսուի այստեղ Սուրբ Հոգիի կնիքին մասին:

Մենք ալ, իբրեւ մարդիկ, կրնանք կնքել որոշ առարկաներ: Վստահաբար տեսած էք մոմէ կնիքներ, որոնք կարեւոր նամակներու վրայ կը դնեն: Այդ կնիքը կը նշանակէ թէ այդ գրութիւնը իսկապէս շատ կարեւոր է:


Սուրբ Հոգիին կնիքը բոլորէն աւելի կարեւոր է:



*Ան իր կնիքը \_\_\_\_\_ վրայ եւ մեզի \_\_\_\_\_ իր \_\_\_\_\_*

*մեր \_\_\_\_\_ մէջ, իբրեւ \_\_\_\_\_ :*

տուաւ ապաւէն Հոգին դրաւ մեր սրտերուն




## ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ

Սուրբ Աթանաս ծնած է 296 թուականին, Աղեք-սանդրիա քաղաքին մէջ՝ Եգիպտոս: Փոքր տարի-թին ան շատ կը սիրել «Եկեղեցի-Եկեղեցի» խա-ղալ: Օր մը Եպիսկոպոսը կը տեսնէ զինք խաղի պահուն եւ կ'ըսէ: «Այս փոքրիկը Եկեղեցւոյ մեծ առաջնորդ պիտի դառնայ օր մը»: Եպիսկոպոսին ըսածը ճիշդ ելաւ:

325 թուականին, աշխարհի ամէն կողմերէն Նիկիա քաղաք հաւաքուեցան քրիստոնեայ Եկե-ղեցիներու բոլոր Եպիսկոպոսներն ու քահանանե-րը, մեծ ժողովի մը համար: Աթանաս այդ ժամա-նակ տակաւին սարկաւագ էր, եւ այդ ժողովին մասնակցեցաւ իբրեւ Եպիսկոպոսի օգնական:

Յակառակ շատ երիտասարդ ըլլալուն, Աթանաս ժողովին մասնակցողներուն կողմէ ճանչցուեցաւ, որովհետեւ լաւապէս պաշտպանեց քրիստոնեա-կան ճշմարիտ հաւատքը: Կարգ մը անձեր ժողո-վին մէջ կ'ըսէին թէ Յիսուս իր Յօրը ննան չէ: Անոնք նոյնիսկ հաճելի երգեր գրած էին, որոնք ժողո-վուրդը ուրախութեամբ կ'երգէր: Այս երգերուն մէջ կ'ըսուէր որ Յիսուսը Աստուծոյ Որդին չէ:



Աթանաս կարճահասակ, նիհար մարդ էր, բայց շատ լաւ խօսող՝ ճարտասան: Ան իր խօսած ճառերով Եկեղեցին ազատեց սխալ գաղափարներէ:

Ան շատ զոհուեցաւ հաւատքը պաշտպանելու համար: Իր թշնամիները կ'ուզէին զինք սպաննել գաղտնաբար: Անոնք մինչեւ վերջ հալածեցին ու զրապարտեցին զինք: Բայց Աթանաս չյուսահատեցաւ: Ան շարունակեց յայտարարել ու գրել, թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է: Ան յիշեցուց ժողովուրդին, որ միայն Աստուծոյ Միածին Որդին կրնայ փրկել մեզ: Ան զգուշա-ցուց իր քրիստոնեայ բարեկամները, որպէսզի հեռու մնան սխալ ուսուցումներէ, նոյնիսկ եթ անոնց ուսուցիչները խելացի մարդիկ են եւ համոզիչ գաղափարներ ունին:

Աթանաս շատ դժուար կեանք ունեցաւ, ու յաճախ առանձին մնաց իր պայքարին մէջ: Բայց ան կ'ապաւինէր Աստուծոյ, եւ գիտէր որ Սուրբ Յոգին միշտ իր հետ է:

1. Սուրբ Յոգին ինչպէ՞ս անոր հետ կրնար ըլլալ: Այստեղ գրէ՝ մտածումներդ:

---

2. Սուրբ Աթանաս ի՞նչ պիտի ըսէր մեզի եթէ այսօր ապրէր:

---

3. Նկարագրէ պահ մը, երբ Յիսուս քեզի օգնած է Սուրբ Յոգիին միջոցաւ:

---

Չեր դասընկերներուն հետ արտասանեցեք կամ երգեցեք Սուլը Աթանասին եւ սուրբ հայրապետներուն նույիրուած Օրինութեան ԳԶ. շարականի հետեւեալ տունը.

**Եւ Սուլը Երրորդութեան ծշմարիտ հաւատքը ուղղափառ բոլոր Եկեղեցիներուն  
քարոզեցին՝ հաւատալ Յօր, Որդիին եւ Ամենասուրբ Յոգիին:**

The musical notation consists of four staves of music in G clef, 2/4 time, and a key signature of one flat. The lyrics are written below each staff. The first staff starts with 'Եւ զհաւատը նը-չմարիտ հաւատքը բոլոր Եկեղեցիներուն քարոզեցին՝ հաւատալ Յօր, Որդիին եւ Ամենասուրբ Յոգիին:'. The second staff continues with 'թեանն, ընդ-հանուր քարոզ զեցին յեկեղեցին ուղղափառ քարոզեցին՝ հաւատալ Յօր, Որդիին եւ Ամենասուրբ Յոգիին:'. The third staff begins with 'փառաց հաւատալ ի ձայն եւ ուղղափառ քարոզեցին՝ հաւատալ Յօր, Որդիին եւ Ամենասուրբ Յոգիին:'. The fourth staff concludes with 'եւ յամենասուրբ Յօր գի':

## ԸՆՏԱԾԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այս պահուան համար քանի մը առարկաներ պատրաստ ունեցեք. Աստուածաշունչ մը, հաստ խաւաքարտ մը, դանակ մը, ներկելիք գրիշներ որեւէ գոյնի, եւ հում գետնախնճորներ՝ ընտանիքի իւրաքանչիւր անդամին կէս հաստ բաւելու չափ: Փոշիով ներկ պատրաստեցեք, ապա կերակուրի գոյն աւելցուցեք եւ գործիքով խառնեցեք, որպէսզի կարկանդակի տեսք ստանայ:

Այս շաբթօւան դասը Սուլը Յոգիին մասին է: Մենք գիտենք որ Սուլը Յոգին Եկեղեցիին վրայ հանգչեցաւ Յոգեգալուստի օրը: Աստուծոյ խոստումին համաձայն, Սուլը Յոգին այդ օրուընէ մինչեւ այսօր Եկեղեցիին հետ՝ այսինքն մեզի հետ է:

Նոր կտակարանը բազմաթիւ առիթներով կը խօսի այս մասին, թէ Սուլը Յոգին մեզի հետ պիտի ըլլայ: Մկրտութեամբ Քրիստոնեութիւնը կ'ընդունինք, եւ Սուլը Միւռոնով Սուլը Յոգին կնիքը կը ստանանք: Յետեւաբար, իրեւ մկրտուածներ եւ Եկեղեցւոյ անդամներ, Սուլը Յոգին մեզի հետ ունինք միշտ:

Միասնաբար կարդացէք **Եկեղեցւոյ 4.30 համարը**: Յետեւեալ հարցումներուն մասին միասին մտածեցէք.՝

- 1.- Ինչպէս կրնանք չնեղացնել Սուլը Յոգին: (Բոլորին նկատմամբ բարի վարմունք ունենալով, Աստուած սիրելով, հաւատացեալ ըլլալով, ծոյլ չըլլալով, եւ Եկեղեցի երթալով ու աղօթելով):
- 2.- Ի՞նչ խոստում տրուած է մեզի: (Մենք կնքուած ենք Սուլը Յոգիով, եւ Աստուած կ'ուզէ որ մենք իր արքայութիւնը ժառանգենք):

Ընտանիքի իւրաքանչիւր անդամ գետնախնճորի կտրուած մասին վրայ կնիք մը թող փորագրէ դանակով:

Ապա նախադասութիւն մը ընտրեցեք եւ գրեցեք թուղթի մը վրայ: Կրնաք խոստումներ գրել ծեր ընտանիքին համար, ըսելով թէ պէտք է ազմիւ ըլլալ, Աստուծոյ հաւատարիմ ըլլալ, եւայլն: Կամ կրնաք գրել՝ «մենք կնքուած ենք Սուլը Յոգիով»: Ապա իւրաքանչիւր անդամ իր պատրաստած կնիքով թող կնքէ այդ թուղթը:

Թուղթը կախեցեք տեղ մը որ ամէն մարդ կարենայ տեսնել: Այս պահը կրնաք աւարտել Սուլը Յոգիին ուղղուած հետեւեալ աղօթքով.՝

**«Յոգի Աստուծոյ, Աստուած ծշմարիտ, որ Յորդաման գետին վրայ եւ վերնասունը իջար, եւ զիս լուսաւորեցիր սուլը աւազանին մկրտութեամբ. մեղանչեցի երկինքին դէմ՝ քու առջեւդ. վերստին մաքրէ զիս քու աստուածային կրակով, ինչպէս հրեղէն լեզուներով մաքրեցիր սուլը առաքեալները. եւ ողորմէ քու արարածներուդ եւ ինօթ՝ բազմամեղիս, Ամեն»:**



Առաքեալները վկայեցին Յիսուս Քրիստոսի մասին  
իբրեւ Փրկիչ, անոր Բարի Լուրը տարածելով ամէն տեղ:  
Անոնք նաեւ Յիսուսի վրայ իրենց ունեցած հաւատքը փաստեցին  
գործնապէս՝ բժշկելով ու իրարու պէտքերը հոգալով: Սուրբ Ստեփանոս՝  
առաջին սարկաւագը, դարձաւ առաջին նահատակը,  
իր կեանքը տալով Յիսուսի համար:



### **Խօսք՝ ուղղուած ծնողներուն**

Յիսուս Քրիստոսի մասին վկայութիւն պիտի տանք, առաջին Եկեղեցւոյ օրինակը տալով քանի մը կերպերով: Առաքեալները վկայեցին Բարի Լուրը տարածելով, զոր տարին երկրէ երկիր: Անոնք նաեւ բժշկութիւն կատարելով վկայեցին եւ իրարու պէտքերը հոգալով: Սուրբ Ստեփանոս առաջին նահատակը եղաւ, որ վկայեց եւ իր կեանքը տուաւ Յիսուսի համար: Առաքեալները շարունակեցին վկայել, նորահաստատ Եկեղեցին առաջնորդելով:

## ՊԻԾԻ ՅԱՅՏԱՐԱՐԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՂ

Ամէն օր, թէ տաճարին եւ թէ իրենց տուներուն մէջ, անդադար կը սորվեցնէին,  
Յիսուս Քրիստոսը քարոզելով իբրեւ Փրկիչ:

Ըստ Գործ Առաքելոց 5.42

*Գործունեություն...*

### Յերմինէն գեղեցիկ գաղափար մը ունեցաւ

Ահաւասիկ օրինակ մը, թէ ի՞նչ կը պատահի ընկերներու խումբի մը մէջ, երբ անոնցմէ մէկը նոր գաղափար մը յայտնէ: Ամէնքն ալ արդեօք նոյն ձեւով կ'ընդունին իր գաղափարը:



**Դալար.**— Ուրեմն բոլորդ ալ ներկայ պիտի ըլլա՞ք Յակոբենց տունը այս գիշեր: Շատ անակնկալի պիտի գայ Յակոբ:

**Սոսի.**— Մեզ համար ալ հաճելի պիտի ըլլայ: Յիմա որ ինք աւելի լաւ կը զգայ, շատ պիտի ուրախանայ եւ շատ մը կատակներ պիտի ընէ, ինչպէս նախապէս կ'ընէր:

**Սարգիս.**— Ժամը քանիի՞ն պիտի հաւաքուինք եւ ես ի՞նչ կրնամ բերել:

**Յովսէփ.**— Բան մը բեր: Կրնաս գրադումի համար խաղեր բերել, Դալարը եւ Սոսին ալ կարկանդակ պիտի եփեն, ես ալ իմ կիթառս պիտի բերեմ:

**Դալար.**— Յակոբին մայրն ալ մեզի թէյ կ'եփէ: Ան շատ ուրախ է որ ասիկա կը կազմակերպենք մենք: Ան ըսաւ թէ Յակոբին բան չէ ըսած եւ անակնկալի պիտի գայ:

**Սոսի.**— Այո, ան հազար անգամ փաթռուեցաւ եւ համբուրեց Յերմինէին, երբ իմացաւ որ իր գաղափարն էր ասիկա:

**Սարգիս.**— Ի՞նչ հաճելի էր, Յերմինէն կաս-կարմիր եղած էր ամշնալէն:

**Բարտի.**— Գիտ՞ք ինչ: Ես բնաւ համաձայն չեմ ձեր գաղափարին, եւ թերեւս ներկայ ալ ըլլամ այդ գիշեր:

**Յովսէփ.**— Ի՞նչ ըսել կ'ուզես: Մենք բոլորս համաձայն ենք այս գաղափարին, եւ վստահ ենք որ Յակոբին տրամադրութիւնը քիչ մը պիտի փոխուի:

**Սարգիս.**— Այո, շատ ծիշդ է ըսածը, ի՞նչ է քու դժուարութիւնն, Բարտի:

**Դալար.**— Կարծեմ կը նախանձիս որ ասիկա Յերմինէին գաղափարն էր:

**Բարտի.**— Աստիկա ծիշդ չէ, բայց կրնայի նաեւ այդ մասին ալ մտածել:

**Սարգիս.**— Բայց դուն բնաւ չմտածեցիր, իսկ Յերմինէն մտածեց: Ան ուզեց օգտակար դառնալ մեր ընկերոջ, եւ կը խորհիմ որ շատ լաւ գաղափար մըն է ասիկա:

**Յովսէփ.**— Ես ալ այդպէս կը մտածեմ: Շատ լաւ, ուրեմն գիշերը կը տեսնուինք:

**Սարգիս.**— Ինծի հեռաձայնեցէք եւ յիշեցուցէք. Յովսէփ, կը հեռաձայնե՞ս:

**Յովսէփ.**— Միտքդ չե՞ս կրնար պահել:

**Սոսի.**— Ցտեսութիւն ամէնուիդ: Գիշերը կը տեսնուինք:


**Դալար.**— Բարտի, հաճիս դուն ալ եկուր գիշերը: (Միայն Բարտին դուրս կ'ելլէ):

**Բարտի.**— Թերեւս կու գամ. բայց ես աւելի լաւ ծրագիր մը կրնայի մշակել քան Յերմինէին ըրածը: Ինքզինքը շատ խելացի մէկը կը կարծէ:

Աստուածաշնչական պատմութիւնը կարդացած ժամանակ ուշադրութիւն դարձուցէք թէ մարդիկ ինչ-պէս տարբեր մօտեցում կը ցուցաբերեն առաքեալներուն քարոզութեան եւ կատարած թժկութիւններուն:

## Առաքեալու և ճանանու ժողք Կու Տան եւ Հրաշքներ կը կատարեն

ՀԱՅ ԳՈՐԾՔ Առաքեալ 3.1-10, 11-26, 4.1-31, 5.12-42



«Ես գիտեմ որ դուք զԱյն մերժեցիք, որովհետեւ չհասկցաք որ Ան է Մեսիան, Փրկիչը: Ան չաշարուեցաւ, ինչպէս որ մարգարէներ սկիզբէն ըսած էին իր մասին:»

«Բայց իիմա դարձէք ձեր սխալ ճամբէն, որպէսզի պատրաստ ըլլաք երբ Մեսիան դարձեալ գայ, ինչպէս մարգարէները կ'ըսեն: Դուք Աստուծոյ Աքրահամին տուած խոստումին ժառանգորդներն եք, ըստ որուն անոր սերունդները ամբողջ երկրի վրայ պիտի օրինուին:»

Սադուկեցիները, որոնք յարութեան չին հաւատար, ձերբակալեցին Պետրոսը եւ Յովհաննէսը: Անոնք, տաճարի քահանաներուն հետ, հրամայեցին առաքեալներուն որ ա՛լ չխօսին Յիսուսի անունով: Պետրոս անոնց ըսաւ. «Դուք դատեցէք, Աստուծո՞յ մտիկ ընելը աւելի ճիշդ է, թէ ձեզի, որովհետեւ մենք չենք կրնար չխօսիլ այն ամէնուն մասին որ տեսանք եւ լսեցինք»:

Կեսօրէ ետք մը, երբ Պետրոս եւ Յովհաննէս տաճար կ'երթային աղօթելու համար, անդամալոյժ մը շալկած կը տանիին: Ամէն օր մարդիկ զինք կը տանիին տաճարին դրան առջեւ, որպէսզի մտնողներէն դրան մուրար:

Երբ ան տեսաւ Պետրոսը եւ Յովհաննէսը, դրամ ուզեց անոնցմէ: Սակայն Պետրոս պատասխանեց. «Ես արծաթ կամ ուկի չունիմ, բայց ինչ որ ունիմ պիտի տամ քեզի: Յիսուս Քրիստոսի անունով ոտքի ելիր եւ քալէ»: Պետրոս անոր ձեռքէն բռնեց եւ ան ոտքի ելլելով տաճար մտաւ, ամէնուն պատմելով եւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելով:

Ամբողջ ժողովուրդը տեսաւ զինք եւ ճանչցաւ որ ան տաճարին մուտքին նստող մուրացկանն էր: Պետրոսի եւ Յովհաննէսի շուրջ կը հաւաքուէին մարդիկ:

Պետրոս անոնց ըսաւ. «Ով իսրայէլացիներ, մի կարծէք թէ մեր ուժով ըրինք այս հրաշքը: Աքրահամի, իսահակի ու Յակոբի Աստուածը փառաւորեց Յիսուս Քրիստոսը, Այն՝ որ դուք մերժեցիք: Բայց Ան սուրբ է եւ արդար, եւ իր անունով այս մարդը բժշկուեցաւ այսօր:»

Քահանաները սպառնացին առաքեալներուն, բայց ձգեցին որ երթան:

Անոնց ձեռքէն ազատուելէ ետք, Պետրոս եւ Յովհաննէս իրենց ընկերներուն եւ հաւատացեալներուն քով գացին եւ անոնց պատմեցին թէ ի՞նչ ըսին իրենց տաճարի քահանաները, եւ թէ ի՞նչ սպառնալիքներ տուին իրենց: Անոնք միասնաբար աղօթեցին Աստուծոյ, որպէսզի Ան զօրացնէ զիրենք եւ շարունակեն քարոզել ու բժշկութիւններ կատարել Յիսուսի անունով: Երբ կ'աղօթէին, այն վայրը ուր կը գտնուեին ցնցուեցաւ եւ բոլորը Սուրբ Յոգիով լեցուեցան եւ համարձակութեամբ կը խօսէին Աստուծոյ խօսքը:

Առաքեալները շարունակեցին նշաններ ցոյց տալ եւ հրաշքներ կատարել: Յաւատացեալներուն թիւը կը շատնար: Ժողովուրդը հիւանդները ճամբայ կը հանէր, որպէսզի Պետրոսին շուրջ անոնց վրայ իյնար եւ բժշկուէին: Երուսաղէմէն եւ շրջաններէն իր քով հիւանդներ կը բերէին:

Նախանձող քահանաները եւ սաղուկեցինները դարձեալ բանտարկեցին առաքեալները, որպէսզի անոնց աշխատանքը դադրեցնեն: Բայց Աստուծոյ իրեշտակը բանտին դրները բացաւ, եւ երբ տաճարին պահապանները ներս մտան, բանտը պարապ գտան: Յետոյ մէկը եկաւ քահանաներուն եւ ըսաւ. «Այն մարդիկը որ դուք բանտը դրած էիք, ժողովուրդին մէջն են եւ կը քարոզեն»:

Քահանաները դարձեալ հարցուցին Պետրոսին ու Յովհաննէսին եւ ըսին. «Ինչո՞ւ տակաւին կը քարոզէք, չարգիլեցի՞նք ձեզի»: Երբ Պետրոս ըսաւ թէ պէտք է Աստուծոյ հնազանդիլ, անոնք ուղեցին սպաննել զինք:

Սակայն, իրեայ դեկապարներէն մէկը՝ Գամաղիէլ անունով, ըսաւ անոնց. «Զգեցէք այս մարդիկը: Եթէ ասոնց ծրագիրը մարդկային է, արդէն կը ծախողի. իսկ եթէ Աստուածային է, չէք կրնար պարտութեան մատնել: Նոյնիսկ Աստուծոյ դէմ պայքարած կ'ըլլաք այդ ձեւով»:

Գամաղիէլ կրցաւ համոզել զիրենք, ուստի անոնք պատժեցին առաքեալները ծեծի ենթարկելով, եւ յետոյ ձգեցին որ երթան: Առաքեալները ուրախ էին որ Յիսուսի համար չարչարուեցան: Այնուհետեւ ամէն օր տան եւ տաճարին մէջ կը քարոզէին եւ կ'ուսուցանէին Յիսուսի՝ Մեսիային մասին:

## ՄՏԱԾԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թատերականօրէն ներկայացուցէք անդամալոյժ մարդուն բժշկութիւնը Պետրոսի եւ Յովհաննէսի ձեռքով (Գործք Առաքելոց 3.1-10):

Այս թատրոնը պատրաստելու համար քանի մը անձեր պատրաստեցէք, որոնք այդ օր տաճարին մէջ էին:

- Անոնք ինչպէ՞ս ընդունեցին այս հրաշքը:
- Անոնք ի՞նչ ըսին:
- Անոնք ի՞նչ ըսին ուրիշներուն այդ մասին յետոյ:

Իրենց պատասխանները ներառէք թատրոնին մէջ:

### **Յոգեւոր բառարան**

#### **ՏԱՅԱՐԻ ԻՇԽԱՆԱՌՈՐՆԵՐ**

Ասոնք տաճարին պատասխանատու քահանաներն էին: Անոնք նաեւ կը կոչուէին «Քահանայապետներ» կամ «Երեցներ»:

## Անարծաթ բժիշկներ՝ Կողմաս եւ Դամիանոս

Ահաւասիկ պատմութիւն մը երկու սուրբերու մասին որոնք, առաքեալներու օրինակին հետեւելով, մարդոց օգնեցին ու զանոնք բժշկեցին:

1. Դարեր առաջ Հռոմի մէջ կ'ապրէին Կողմաս եւ Դամիանոս անունով երկու եղբայրներ: Անոնք Աստուծմէ օժտուած էին բժշկելու իրաշագործ շնորհքով:
2. Այդ օրերուն շատ հիւանդներ կային, այնպէս որ Կողմասն ու Դամիանոսը միշտ զբաղած էին իրենց մօս եկող այրերը, կիներն ու մանուկները բժշկելով ու անոնց խնամք տանելով:
3. Անոնք միայն մարդիկը չէին բուժեր, այլ նաեւ կենդանիները: Անոնց համար Աստուծոյ բոլոր արարածներն ալ կարեւորութիւն կը ներկայացնէին:
4. Թերեւս հարցնեք թէ հիւանդները, յատկապէս աղքատ մարդիկ, ինչպէս կրնային վճարել Կողմասին ու Դամիանոսին, իբրեւ վարձատրութիւն իրենց կատարած բժշկութեան:
5. Անոնք իրենց կատարած բժշկութեան համար դրամ չէին առներ, եւ այդ պատճառով ամէնուն կողմէ սիրուած էին: Անոնք միշտ կը քաջալերէին հիւանդները վստահիլ Յիսուս Քրիստոսի, որպէսզի անոր միջոցաւ բժշկուեին:
6. Երկու եղբայրները Յիսուս Քրիստոսի պատգամով կ'առաջնորդուէին, որ կ'ըսէ. «Զրի առիք, ծրի տուլ՛ք»: Այս բառերը կը գտնենք Մատթեոսի աւետարանին 10-րդ գլխուն 8-րդ համարին մէջ:
7. Կողմասն ու Դամիանոսը միայն բժշկելու շնորհք չունեին: Անոնց մեծ ժառանգ մնացած էր իրենց ծնողներէն: Զրի բժշկութիւն ընելէ բացի, անոնք նաեւ դրամ կու տային աղքատներուն:
8. Այդ օրերուն Հռոմի մէջ ապրող ծանօթ միւս քրիստոնեաներուն նման, Կողմասն ու Դամիանոսը հարց ունեցան կայսրին հետ, որ կը հալածէր քրիստոնեաները ու կը պատշպանէր կուռքերը, փոխանակ երկնաւոր միակ Աստուծոյ:
9. Կողմասն ու Դամիանոսը ձերբակալեցին եւ շղթաներով կապուած բերին Գալերիոս



կայսրին առջեւ: Անոնք հարցաքննութեան ու սպառնալիքներ ստացան, սակայն չուրացան իրենց քրիստոնեական հաւատքը:

10. Անոնք ոչ միայն մերժեցին երկրպագել կուռքերուն, այլ նաև կայսրին դիմեցին ըսելով. «Եթէ քանդակագործները չքանդակեին ձեր կուռքերը, դուք պաշտելու առարկայ չեփ ունենար»:
11. Կայսրը զայրացաւ, բայց գնահատեց եղբայրներուն քաջութիւնը: Ապա, հրամայեց ազատ արձակել եղբայրները եւ ինք ալ քրիստոնեայ դարձաւ: Ան գիտցաւ, որ միայն ճշնարիտ Աստուածը կրնայ եղբայրներուն տալ այդպիսի զօրութիւն եւ ուրիշները այնքան սիրելու շնորհը:
12. Կողմասն ու Դամիանոսը շարունակեցին բուժել հիւանդներն ու օգնել աղքատներուն: Անոնք ամէնուն կը թելադրէին Աստուածոյ վստահիլ, եւ զԱյն սիրել ամէն բան աւելի: Անոնց համբաւը ամբողջ երկրին մէջ տարածութեաւ եւ մարդիկ երախտապարտ էին անոնց նկատմամբ, որովհետեւ պատրաստակամութեամբ կը բժշկեին հիւանդները, առանց վարձատրութեան:
13. Իրենց նախսկին ուսուցիչներէն մէկը կը սկսի նախանձիլ եղբայրներուն: Նախանձը հետզհետէ կը փոխուի ատելութեան: Օր մը, ան կը հրաւիրէ որ եղբայրները իր հետ մօտակայ լեռները բարձրանան դեղերու մէջ օգտագործելի բոյսեր հաւաքելու համար: Այդ լեռներուն մէջ դաւադրաբար ան կը սպաննէ եղբայրները:
14. Սուրբ Կողմասն ու Դամիանոսը մեռան իբրեւ իսկական քրիստոնեաներ, որոնք կը բուժեին եւ յոյս կը ներշնչէին հիւանդներուն: Մենք զանոնք կը յիշենք իբրեւ Քրիստոսի հետեւորդներ, որոնք Աստուածն իրենց տրուած շնորհքը կը բաշխէին ամէնուն: Այդ աշխատանքը անոնք չէին ըներ դրամ շահելու կամ պատիւներու արժանանալու համար, այլ կ'ուզէին որ մարդիկ հաւատան Աստուածոյ:

- ա) Ո՞վ է նախանձը այս պատմութեան մէջ: Ո՞վ էր նախանձը «Ճերմինէն գեղեցիկ գաղափար մը ունեցաւ» պատմութեան մէջ:*
- բ) Մարդիկ ինչո՞ւ կը նախանձէին Կողմասին ու Դամիանոսին:*
- գ) Երբ մէկը լաւ գործ մը կը կատարէ կամ լաւ գաղափար մը կ'ունենայ, ի՞նչ կրնանք ընել զայն կատարելագործելու համար, նախանձելու փոխարէն:*




## ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՋՔՑՆԵՐ

Ուղղափառ Եկեղեցիները քրիստոսի աշակերտներուն եւ սուրբերուն օրինակին կը փորձեն հետեւիլ: Աստուծմէ կը խնդրենք որ օրինէ բոլոր բարեգործները, փոխանակ նախանձելու անոնց: Մենք նաեւ կ'աղօթենք անոնց համար, որոնք կարիքաւոր են եւ մանաւան՝ հիւանդ:

Աղօթքներ կան որոնք Եկեղեցւոյ մէջ կ'արտասանենք: Քահանան կրնայ նաեւ աղօթք կատարել հիւանդանոցին կամ հիւանդներու տան մէջ: Ահաւասիկ հատուած մը քահանային աղօթքէն:—

«Տէր Աստուած, քու ծառայիդ եւ ամբողջ ժողովուրդին վրայէն վերցուր ցաւերճ ու հիւանդուրթիւնները եւ ամէնուն շնորհէ կատարեալ առողջուրթիւն քու ամենայաղթ խաչիդ նշանով, որով մարդկութեան տկարուրթիւնները վերցուցիր»:

Հատանկարիդ (փազը) վրայ գծէ կամ գրէ այն ինչ որ կրնաս ընել հիւանդի մը կամ կարիքաւորի մը օգնելու համար:



## ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Աստուածաշունչ մը ունեցէք պատրաստ, ինչպէս նաեւ լայն բերանով շիշ մը, որուն վրայ «դեղ» գրուած ըլլայ:

Այս շաբթօւան դասը կենդրոնացած էր առաքեալներու բժշկութեան ու կարիքաւորներուն հասնելու աշխատանքներուն: Աշակերտները սորվեցան նաեւ Ս. Կողմասի եւ Ս. Դամիանոսի մասին, որոնք լաւագոյն եւ քրիստոնեավայել կերպով օգտագործեցին իրենց բժշկելու կարողուրթիւնը՝ յօգուտ շատերու: Իրենց կատարածին փոխան վարձք չպահանջելնուն համար անոնք եւս կը պատկանին այն սուրբերուն դասին, որոնք կը կոչուին «անարծաք»: Զեր զաւակը թող պատմէ ձեզի անոնց մասին:

Դասը նաեւ որոշ բացատրուրթիւններ կու տայ թէ Եկեղեցին այսօր ինչպէ՞ս կը կատարէ այդ բժշկուրթիւնները եւ անոր առնչուող աղօթքները: Անելի շեշտելու համար այս գաղափարը, միասնաբար կարդացէք **Յակոբոս առաքեալի 5.13-14** համարները: Խօսեցէք անոնց թէ ինչպէ՞ս կրնանք աղօթել իրարու համար Եկեղեցւոյ թէ տան մէջ, թէ ի՞նչ կ'աղօթէ քահանան հիւանդներուն վրայ:

Միասնաբար գտէք անձ մը, ձեր ընտանիքին ծանօթ, որ այս շրջանին աղօթքի կարիք ունի: Այդ անձին անունը գրեցէք թթիկի մը վրայ եւ ձեր բերած շիշին մէջ դրէք: Կրնաք նաեւ զարդարել այդ շիշը ինչպէս որ կ'ուզէք:

Շիշը այնպիսի տեղ մը դրէք տան մէջ, որ միշտ յիշեցնէ ընտանիքի անդամներուն աղօթել այդ անձին համար: Երբեմն-Երբեմն ըստք որ անոր մէջ անուններ աւելցնեն կամ պակսեցնեն՝ ըստ կարիքի:

# ՍՏԵՓԱՆՈՍ՝ ԱՌԱՋԻՆ ՍԱՐԿԱՒԱԳԸ

Ստեփանոս Աստուծոյ շնորհքով եւ օգոնութեամբ լեցուն մարդ մըն էր,  
որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ կը կատարէր եւ նշաններ ցոյց կու տար:  
*Ըստ Գործք Առաքելոց 6.8*



**Գործո՞ն...**

## Ամէն մարդ օգնականի պէտք ունի

Շատ մը գործեր առանձին կրնանք կատարել: Սակայն կեանքի մէջ պահեր կան, երբ ուրիշներու օգնութեան պէտք կ'ունենանք: Անոնք այնպիսի պահեր են, երբ մեր կարողութենէն վեր դէպքեր կը պատահին եւ չենք կրնար առանձին լուծել զանոնք:

Մտածեցէք այս կացութիւններէն իւրաքանչիւրին մասին: Թատերական երկու դերակատարութեամբ խաղացէք այս կացութիւնները, ցոյց տալով այն երկու կերպերը, երբ մարդիկ պէտք կ'ունենան ուրիշներու օգնութեան:



Ամուսնացած երիտասարդ զոյգ մը զոյգ զաւակներու ծնողը կը դառնայ:

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

Մարդ մը երկու ընկերներ ունի, որոնք նոր տուն կը փոխադրուին: Երկուքն ալ իր օգնութիւնը կը խնդրեն, որպեսզի տան ապրանքները հաւաքեն ու նոր տունը տանին: Սակայն երկուքն ալ նոյն շաբաթավերջին որոշած են փոխադրուիլ:

3. \_\_\_\_\_

4. \_\_\_\_\_

Ուսուցիչ մը իր դասարանին մէջ քանի մը աշակերտներ ունի որոնք յաւելեալ օգնութեան կը կարօտին, հասնելու համար դասարանի ընդհանուր մակարդակին:

5. \_\_\_\_\_

6. \_\_\_\_\_

Երբ Աստուածաշնչական պատմութիւնը կը կարդաք, տեսէք թէ ինչպէ՞ս կացութիւնը փոխուեալ առաջին շրջանի Եկեղեցւոյ պարագային եւ առաքեալները օգնականներու կարիքը զգացին:

# ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՋԵՆ

## Առաջն սարկահագաւոր կը ծառացեա Եկեղեցին

ՀԱՅ ԳՈՐԾՔ Առաքելոց 6.1-15



աշխատանքը իրենք կատարեն: Իսկ մենք ալ մեր կարգին կը նուիրուինք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին քարոզութեան»:

Առաքեալներուն ըսածք հաճելի թուեցաւ հաւատացեալներուն, եւ անոնք ընտրեցին Ստեփանոսը՝ հաւատքով ու Սուրբ Հոգիով լեցուն մարդ մը: Անոնք ընտրեցին նաև Փիլիպոսը, Պրոքորոնը, Նիքանորը, Թիմոնը, Պարմենասը եւ Նիկողայոսը, որ նոր քրիստոնեայ դարձած էր՝ Անտիոքէն: Այս մարդիկը բերին առաքեալներուն դիմաց, որոնք աղօթեցին եւ իրենց ծեռքը դրին անոնց վրայ:

Աստուծոյ խօսքը շարունակեց տարածուիլ: Հաւատացեալներուն թիւը կը շատնար երուսալէմի մէջ:

Ստեփանոս, շնորհքով ու զօրութեամբ լեցուն, մեծ աշխատանքներ եւ նշաններ կատարեց ժողովուրդին մէջ: Ապա, ժողովարանի պատկանող կարգ մը մարդիկ, ինչպէս նաև Կիլիկիայէն, Աղեքսանդրիայէն, Կիլիկիայէն ու Ասիայէն եկած անձեր, դէմ խօսեցան Ստեփանոսի: Բայց անոնք չկրցան յաղթել անոր իմաստութեան եւ Հոգիին՝ որով ան կը խօսէր:

Ուստի, անոնք գաղտնի կերպով մարդիկ վարձեցին որ ըսեն. «Մենք լսած ենք, որ Ստեփանոս հայիոյալից խօսեր կ'ըսէ Մովսէսի եւ Աստուծոյ մասին»: Այս ծեւով անոնք ժողովուրդը եւ ծերերն ու դպիրները թշնամացուցին Ստեփանոսի: Ապա անոնք ծերբակալեցին Ստեփանոսը

Եկեղեցւոյ առաջին շրջանին, երբ հետեւորդներուն թիւը եւ հաւատացեալները կը շատնային, յունախօսները սկսան գանգատիլ երրայեցիններուն դէմ: Յունախօսները ըսին որ իրենց այրինները անտէր կը մնային եւ օրուան հացը չին կրնար ուտել:

Ուստի, 12 առաքեալները ամրող հաւատացեալները ժողովի կանչեցին: Առաքեալները անոնց ըսին. «Ճիշդ չէ որ մենք Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգենք եւ կերակուրի սեղաններ պատրաստելով գրադինք: Ուստի, քարեկամներ, ձեր մէջէն եօթը հոգիններ ընտրեցէք, որոնք քարի համբաւ ունենան եւ Հոգիով ու իմաստութեամբ լեցուն ըլլան, որպէսզի այս

Եւ դատելու տարին: Անոնք սուտ վկաներ բերած էին, որոնք ըսին. «Այս մարդը միշտ մեր տաճարին ու Մովսեսի Օրէնքին դեմ կը խօսի: Աս նոյնիսկ կ'ըսէ, որ այս Նազովուցի Յիսուսը տաճարը պիտի քանդէ եւ Մովսեսի Օրէնքը պիտի փոխէ»:

Դատարանին մէջ եղողները լաւ մը նայեցան Ստեփանոսի դէմքին եւ տեսան որ հրեշտակի դէմք ուներ ան:

## ՄՏԱԾՆՔ

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

- 1.- Ինչո՞ւ համար առաքեալները պէտք է մարդիկ գտնէին սեղանին սպասարկելու համար:
- 2.- Ուր եթէ ներկայ ըլլայիք Ստեփանոսը դատող մարդոց քով եւ տեսնէիք որ անիկա «հրեշտակի դէմք ուներ», ի՞նչ կ'ընէիք:

Գրեցէք ձեր մտածումները:



### **Դոգեւոր բառարան**

#### **ՅՈՒԱԽՈՍՆԵՐ**

Հրեական ծագումով  
քրիստոնեաներ, որոնք  
յունարէն կը խօսին:

#### **ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐ**

Դարձեալ հրեական ծագումով  
քրիստոնեաներ, որոնք  
յունարէն չէին խօսեր,  
այլ՝ արամերէն:

#### **ԿԱՅՐՈՅԱՆՔ**

Անարգական խօսքեր՝  
Աստուծոյ դեմ:

## Սուրբ Փիրէ Սարկաւագուհին

Չատ մը մարդոց կողքին, շատ մը կիներ եւս ծառայեցին Եկեղեցւոյ եւ աշակերտեցին Սուրբ Պողոսի: Գիտենք նաև որ կիներ օգտակար հանդիսացան որ ուրիշ կիներ եւս մկրտուին, ամոնց նկատմամբ հիւրընկալ եղան եւ ուղղութիւն տուին քրիստոնէական կեանքի մէջ: Այս կիներն ալ սարկաւագներ էին:

Կարդացէք **Հռոմայեցիներուն** գրուած նամակին **16.1-2** համարները, եւ այստեղ քանի մը տող գրեցէք թէ հ՞նչ կ'ըսէ Պողոս առաքեալ Փիրէ Սարկաւագուհիին մասին:

---



---




---



Պողոս առաքեալ շատ կարեւոր պարտականութիւն մը տուաւ Փիրէին: Ան էր որ իր նամակը տարաւ հռոմայեցի քրիստոնեաներուն եւ զայն կարդաց ամոնց: Պողոս առաքեալ հռոմայեցիներուն ըսաւ որ զայն Տիրոջ անունով ընդունին, ինչպէս վայել է քրիստոնեաներուն:

Կարդացէք **Հռոմայեցիներուն 12.9-21** համարները: Ասոնք քանի մը խօսքեր են այն նամակեն, որ Փիրէ Պողոս առաքեալի անունով տարաւ հռոմայեցիներուն: Բեզի համար կարեւոր նկատուող նախադասութիւն մը ընտրէ եւ վարի նամակին մէջ գրէ: Նոյն նախադասութիւնը աւելի մեծ գրէ եւ զարդարէ զայն:

**Նամակ՝ Հռոմի քրիստոնեաներուն**



## Հարցազրոյց՝ սարկաւագի մը հետ

Մենք, տղայ ըլլանք թէ աղջիկ, շատ մը ծեւերով կրնանք հետեւիլ սարկաւագներու օդինակին, որոնք Աստուծոյ ու մարդոց ծառայեցին: Մեր Եկեղեցին մէջ սարկաւագները, որոնք տղայ կ'ըլլան, Սուլր Պատարագի ժամանակ եւ այլ Եկեղեցական արարողութիւններու ընթացքին քահանային կը սպասարկեն խորանին վրայ: Անոնք նաեւ երբեմն ժողովուրդին կեանքին մէջ օգտակար կ'ըլլան ուրիշներուն: Անոնք երբեմն կերակուր կը բաժնեն աղքատներուն, հիւանդներուն այցելութիւն կու տան, եւ տունները այցելելով կը հարցնեն եթէ որեւէ կարիք ունին:

Աշակերտներէն մէկուն հետ միասին կարդացէք Պողոս առաքեալի խօսքը լաւ սարկաւագի մասին, **Ա. Տիմոթեոս 3.18**-ին մէջ: Ապա «հարցազրոյց» մը պատրաստեցէք սարկաւագի մը հետ: Մէկը կրնայ «հարցազրոյց»ը կատարողը ըլլալ, իսկ միւսը՝ հարցումներուն պատասխանող սարկաւագը (աղջիկ կամ տղայ): Հարցազրոյց վարողը կրնայ ստորեւ դրուած հարցումներէն հարցնել եւ պատասխանները գրել:

- Ի՞նչ կ'ընէք օրուան ընթացքին:

---

---

- Ինչպիսի՞ մարդոց կը հանդիպիք եւ ինչպէ՞ս կ'օգնէք անոնց:

---

---

- Ինչո՞ւ սարկաւագ ըլլալ փափաքեցաք:

---

---

- Չեր գործին ամենէն հաճելի եւ իմաստալից բաժինը ի՞նչ է:

---

---

## ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այսօրուան դասը կեղրոնացած էր առաքեալներուն օգնական ունենալու կարիքին վրայ, որպեսզի կարենային հասնիլ Եկեղեցւոյ օրէ օր աճող գործին: Այդ օգնականները առաջին սարկաւագները եղան: Յաջորդող տարիներուն սարկաւագներուն թիւը պիտի շատնար՝ տղայ թէ աղջիկ:

Այս դասը մեզի կը նկարագրէ անոնց կողմէ կատարուած աշխատանքներէն մաս մը, եւ կը թելադրէ որ մենք ալ անոնց օրինակին հետեւինք, մեր օրերու պայմաններով:

Դասը նաև գորգահեռներ կը գտէ սարկաւագութեան եւ ծառայութեան միջեւ: Մեր ապրած ընկերութեան մէջ այսօր «ծառայութիւն» գաղափարը շատ հաճելի չէ: Յաճախ ծառայելը նուաստութիւն կը համարուի: Ընդհակառակը, այսօր մենք կ'ուզենք բարձր դիրքերու վրայ ըլլալ եւ կ'ուզենք որ ուրիշներ մեզի ծառայեն:

Յիշեցուցէք ծեր ընտանիքին Յիսուսի կատարած մեծ ծառայութեան օրինակը, երբ Վերջին Ընթրիքի գիշերը իր աշակերտներուն ոտքերը լուաց (**Յովհաննէ 13.1-16**): Միասնաբար խօսեցէք ծեր կատարած ծառայութիւններուն եւ ուրիշներուն ծեզի կատարած ծառայութիւններուն մասին: Մեր Տերը կ'օսէ, թէ աւելի զօրաւոր կ'ըլլանք երբ ծառայենք ուրիշներուն: Այս գաղափարը բացատրեցէք եւ օրինակներ տուեք ծեր կեանքէն, երբ ծառայած էք ու գոհունակութիւն զգացած եւ աւելի զօրաւոր դարձած: (Օրինակ՝ աշկերտ մը գործին կը տիրապետէ հնազանդելով իր վարպետին ու նախ ծառայելով անոր: Ուսանողներ իրենց ուսուցչին հնազանդելով գիտութեան կը հասնին: Անշուշտ երբ ուզելով ծառայէ մարդ, ներքին ուրախութիւն մը կը զգայ):

Միասնաբար աղօթեցէք որ Աստուած համեստութիւն տայ ծեզի, որպեսզի կարենաք ծառայել, ինչպէս նաև երախտագիտութեան ոգի՝ գնահատելու համար ուրիշներուն ծեր նկատմամբ կատարած ծառայութիւնը:



# ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ՝ ԱՌԱՋԻՆ ՆԱՀԱՏԱԿԸ

Մինչ անոնք կը քարկոծեին Ստեփանոսը, ան կ'աղօթէր ըսելով.

«Տէր Յիսուս, ընդունէ հոգիս»: Ապա ծունկի եկաւ եւ բարձր ձայնով ըսաւ. «Ասիկա մեղք մի սեպեր իրենց»:

*Ըստ Գործք Առաքելոց 7.59-60*



## Գուտըն...

Մարիան շատ մտահոգուած էր: Աս երբ իր ընկերուիիները տեսնե դպրոցը, անոնց պիտի ըսէ. «Չեմ կրնար անտեսել նոր աղջիկը: Աս շատ դժուար կացութեան մէջ է»:

Մարիան երբ իր ընկերուիիներուն մոտեաւ, Կասիա իրեն ըսաւ. «Մեր անուշիկ Մարիան կու գայ, որ միշտ ազնիւ եղած է ամէնուն հետ»: Կասիա եւ Դալար իրարու նայեցան եւ խնդացին:

Մարիան զգաց որ իր այտերը կը կարմրէին: «Կը բաւէ ալ: Ես բնաւ չեմ ըսած թէ անուշիկ եմ ու բացառիկ: Բայց ճիշդ չէ անտեսել մէկը որ նոր է, ամչկոտ է, եւ տակաւին չի ճանչնար այն մանուկները որոնց հետ դասարան պիտի մտնէ»:

Քնարիկ ըսաւ. «Մարիա, գիտեն որ ճիշդ ես: Բայց եթէ մենք այդպիսի աղջկայ մը հետ ընկերուիի ըլլանք, ամէն մարդ պիտի կարծէ որ մենք ապուշ ենք: Գիտես որ ինք լաւ չի հագուիր, ոչ ալ լաւ կը խօսի, ոչ ալ որեւէ գործ լաւ կ'ընէ»:

Դալար աւելցուց. «Մարիա, եթէ այդքան բարի ես, շարունակէ գիտցածիր պէս: Բայց մենք քեզի պէս չենք մտածեր»:

«Օ՛, եկաւ նոր աղջիկը, եկէք այստեղեն հեռանանք», ըսաւ Կասիա:

Անոնք հեռացան եւ Մարիան առանձին մնաց: Ան շատ վիրաւորուած զգաց եւ կ'ուզէր փախչիլ: Բայց ան փորձեց ժպտալ նորեկ աղջկան, ամչկոտ սպասելով որ անիկա բարեւէ իրեն:



## ՄՏԱԾԵՔ ԱՅՍ ՄԱՍԻՆ

- Ի՞նչ պիտի ընէ արդեօք Մարիան:
- Իր որոշումը ինչպէ՞ս պիտի ազդէ իր վրայ, իր ընկերուիիներուն վրայ եւ մանաւանդ նորեկ աղջկան վրայ:

Նայեցէք թէ Ստեփանոս Մարկարագ ինչպէ՞ս պիտի վարուի իրեն հակառակորդ մարդոց հետ:

## Ստեփանոս Սարկանագ Իր Համարը Կը Պաշտօնաւ

ՀԱՅ ԳՈՐԾՔ Առաքելոց 7.1 - 8.1

Երբ Ստեփանոս զինք դատող խումբին դիմաց կեցաւ, քահանայապետը հարցուց. «Ճի՞շդ է որ դուն ըսած ես որ Յիսուս Քրիստոս տաճարը պիտի քանդէ եւ Մովսեսի պատուիրանները ու աւանդութիւնները պիտի փոխէ»:

Ստեփանոս անոնց յիշեցուց, թէ ինչպէ՞ս Աստուած անոնց հետ եղած էր սկսելով Աքրահամի օրերէն: Ստեփանոս ըսաւ. «Աստուած Աքրահամին նոր երկիր մը խոստացաւ: Ան ըսաւ թէ Աքրահամի յաջորդները իբրեւ օտարական ու գերի պիտի ապրին հեռու երկրի մը մէջ 400 տարի: Բայց Աստուած նաեւ ըսած էր. "Ես իմ ժողովուրդս այդ երկրէն դուրս պիտի բերեմ որպէսզի զիս պաշտէ այս վայրին մէջ": Իսահակ Աքրահամի զաւակն էր, եւ Իսահակի զաւակը՝ Յակոբ 12 զաւակներու՝ 12 նահապետներու հայրը դարձաւ»:


Ապա Ստեփանոս յիշեցուց անոնց, թէ Յակոբի 11 զաւակները, նախանձելով իրենց եղբօր՝ Յովսէփի, զայն գերի իբրեւ ծախտեցին Եգիպտացիներու: Սակայն փարաւոնը կամ Եգիպտոսի թագաւորը շատ սիրեց զայն: Յետոյ, Յովսէփի իր ամբողջ ընտանիքը ազատեց Քանանի մէջ տիրած սովի օրերուն եւ ամենքը Եգիպտոս բերաւ, ուր կերակուրը առատ էր:

Ապա Ստեփանոս ըսաւ. «Երկար տարիներ ետք, նոր փարաւոն մը եկաւ որ իսրայէլացիները գերի դարձուց: Բայց Մովսէս ազատուեցաւ եւ փարաւոնին աղջիկը զայն իր զաւակը դարձուց: Ան մեծցաւ Եգիպտական կրթութեամբ եւ իմաստութեամբ:

«Մովսէս Եգիպտացի մը սպաննեց, որ նեղութիւն կու տար իսրայէլացիի մը: Ան գիտցաւ որ ինք իսրայէլացի մըն է: Բայց օր մը երբ տեսաւ որ երկու իսրայէլացիներ կը կռուէին, մօտեցաւ որ հաշտեցնէ զանոնք. անոնցմէ մէկը իրեն ըսաւ. "Ո՞վ ես դուն որ մեզ կ'ուզես հաշտեցնել: Զի՞ս ալ պիտի սպաննես, ինչպէս որ սպաննեցիր Եգիպտացին":

«Այն ատեն Մովսէս գիտցաւ որ իր կատարած ոճիրը տեսած էին մարդիկ, եւ Մադիամ փախաւ: Յոն ապրեցաւ 40 տարի, եւ ապա Տէրը խօսեցաւ անոր հետ այրող փուշերուն մէջէն Սինա լերան վրայ, եւ ըսաւ. "Քեզ Եգիպտոս պիտի դրկեմ"»:

Ստեփանոս ըսաւ. «Նոյն այդ Մովսէսը Աստուածոյ կողմէ դրկուեցաւ իբրեւ ազատարար եւ ինք էր որ ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսէն, այստեղ իրաշքներ գործելէ վերջ: Մովսէս խոստացաւ որ Աստուած մարգարէ մը պիտի դրկէ: Ան իր ժողովուրդը դէպի անապատ առաջ-



նորդեց հակառակ շատերու դժգոհութեան, եւ պաշտամունքի մոլեց զանոնք: Մովսէս վկայութեան խորան շինեց, որ մեր հայրերը իրենց հետ բերին Աստուծոյ իրենց խոստացած այս երկիրը: Անիկա մնաց մինչեւ Սողոմոն թագաւորին ժամանակ, որ Երուսաղեմի տաճարը կանգնեց»:

Ստեփանոս ըսաւ. «Զար մարդիկ, դուք Սուրբ Յոգիին կը հակառակիք, ինչպէս ձեր հայրերը ըրին: Դուք մարգարեները սպաննեցիք, որոնք ըսին թէ Արդարը պիտի գայ, եւ դուք սպաննեցիք զԱյն եւս: Դուք Օրէնքը ստացաք, բայց չգործադրեցիք զանիկա»:

Անոր խօսքերը շատ զայրացուցին զիրենք: Բայց ան Սուրբ Յոգիով լեցուած ըսաւ. «Նայեցէք, Երկինքը կը տեսնեմ բացուած եւ Մարդու Որդին՝ Յիսուս Քրիստոս նստած Աստուծոյ աջ կողմը»:

Անոնք չուզեցին լսել այլեւս թէ ի՞նչ կ'ըսէ, եւ քարեր առին ու սկսան վրան նետել սպաննելու համար զայն: Ստեփանոս աղօթեց ու ըսաւ. «Տէր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս»: Ապա ծունկի եկաւ եւ բարձր ձայնով ըսաւ. «Տէր, մեղք մի սեպեր ասիկա իրենց համար»: Եւ ապա Ստեփանոս մեռաւ:

## ՄՏԱԾԿՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԽԱԻՆ

Ստեփանոս Սարկաւագին եւ առաջին նահատակին պատմութիւնը մեզի կը ներկայացնէ Եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը, սկսելով Յին Կտակարանէն: Ստեփանոս զինք հալածողներուն կը յիշեցնէ հսրայէլի պատմութիւնը, սկսելով Աբրահամէն, մինչեւ Յոգեգալուստ եւ Քրիստոնէական Եկեղեցի:

Վերաքաղ ըրէք կարգ մը բաժինները Սուրբ Ստեփանոսի ներկայացուցած պատմութեան: Ստորեւ տրուած բացատրութիւններուն համապատասխան վայրերը նշեցէք, անոնց դիմաց դնելով ճիշդ բառը:

- 1.- Աբրահամի ապրած նախկին Երկիրը \_\_\_\_\_
  
- 2.- Վայրը ուր Մովսէս հանդիպեցաւ Աստուծոյ այրող փուշերուն մէջ \_\_\_\_\_
  
- 3.- Երկիրը ուր գերի ըլլալու ծախուեցաւ Յովսէփ \_\_\_\_\_
  
- 4.- Վայրը՝ ուր փախաւ Մովսէս, գիտնալով որ իր կատարած ոճիրէն տեղեակ են մարդիկ \_\_\_\_\_
  
- 5.- Երկիրը՝ ուր Յովսէփի ընտանիքը ապրեցաւ, ուրկէ անոնք Եգիածոս եկան կերակուր գնելու, երբ սով տիրած էր \_\_\_\_\_

Յոգեւոր բառարան

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆ

Իսրայէլացիներու աղօթքի շարժական վայրը, որ իրենց հետ կը տանէին անապատին մէջ:

12 ՆԱՐԱՊԵՏՆԵՐ

Յակոբի 12 զաւակները, որոնք 12 ցեղերու ցեղապետներն էին:

a) Սինա լեռ

b) Քանան

c) Մադիամ

d) Միջագետք


e) Եգիպտոս

## ԿԵՄՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

# Քարտէսի վերաքաղ

Կարդացիք արդէն Ստեփանոսի մասին, իսկ նախորդ դասին ալ՝ Փիբէի մասին: Աստուծոյ այս երկու ծառաները Եկեղեցւոյ առաջին շրջանին ապրած են, երբ Աւետարանը կը քարոզուեր աշխարհին: Ահաւասիկ քարտես մը, որ ցոյց կու տայ այն վայրերը, ուր Եկեղեցին կ'ածէր ու կը զօրանար: Նշեցէք զանոնք:

1. Կլոր մը դրէք  Հռոմին վրայ, ուր Փիբէ տարաւ Պօղոս առաքեալի նամակը:
  2. Ուրիշ կլոր մը դրէք  Անտիոքի վրայ, որ Նիկողայոսի՝ եօթը սարկաւագներէն մէկուն քաղաքն էր, որ ժողովուրդը ընտրած էր առաքեալներուն խնդրանքով:
  3. Երրորդ կլոր մը դրէք  Աղեքսանդրիայի վրայ՝ Եգիպտոսի նշանաւոր քաղաքներէն մէկը: Քաղաք մը, ուրկէ եկած էին Ստեփանոսի հակառակորդներէն մաս մը:
  4. Թեթեւ մը գծեցէք Կիլիկիայի շրջանը, ուրկէ դարձեալ Ստեփանոսի հակառակորդներէն ոմանք եկած էին:
  5. Կլոր մը դրէք  Երուսաղէմի վրայ, ուր Ստեփանոս վկայեց իր քրիստոնէական հաւատքին մասին եւ իր կեանքը տուաւ:



Հոռնէական Կայսրութենէն մաս մը՝ Յիսուսի ապրած օրերուն

## Առանձին դիմադրել


Դիւրին չէ առանձին պայքարիլ երբ արդար ենք ու բարի: Մարիային եւ նորեկ աղջկան պատմութիւնը մեզից ցոյց կու տայ, թէ ինչ դժուար բան է առանձին մնալը կեանքի մէջ եւ մանաւանդ լքուիլը ընկերներէ: Տակաւին, Մարիան գիտէր թէ իր ըրածը ծիշդ էր:

Սուրբ Ստեփանոս եւս առանձին մնաց իրեն հակառակող զայրացած խումբ մը մարդոց դիմաց, որոնք դէմ էին իր հաւատքին ու համոզումներուն: Բայց ան շատ օրուաւոր հաւատք ուներ: Ան գիտէր որ Աստուած միշտ իրեն հետ պիտի ըլլար, այնպէս ինչպէս եղած էր Սովուսի հետ, եւ ամէն անոնց հետ, որոնք կը սիրեն գինք: Ստեփանոս համոզուած ըլլալով այս ծշմարտութեան, բնաւ չվախցաւ իր հաւատքը ուրիշներուն ըսելէ:

Բազմաթիւ կերպերով մենք ալ կրնանք վստահ ըլլալ մեր հաւատքին մասին: Կրնանք աղօթել, եկեղեցի երթալ, եւ Աստուածաշունչը կարդալ, Աստուծոյ ու իր ժողովուրդին մասին աւելի գիտելիք ունենալու համար:

Գիտենք նաեւ որ շատ մը երկիրներու մէջ քրիստոնեաներ շատ աշխոյժ են ու իրենց հաւատքը ամուր կը պահեն Աստուծոյ օգնութեանք:

Թուղթի մը վրայ գրեցէք դէպք մը, երբ մէկը կը ստիպուի իր հաւատքը պաշտպանել: Ատիկա կրնայ ըլլալ դպրոցին մէջ, ընկերներու հետ եղած ժամանակ, կամ այլ շրջանակի մէջ:



## Ճարական՝ նուիրուած Սուրբ Ստեփանոսի

«Քրիստոսի առաքեալ եւ նախավկայ Սուրբ Ստեփանոս,  
դուն որ քարկոծումը յանձն առիր եւ անմահներու  
բնակարանը փոխադրուեցար, աղաչ՝ Աստուծոյ,  
որ մեզի ալ անմահ կեանք շնորհէ»:

## ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այս բաժնին համար կօշիկի տուփ մը պէտք պիտի ունենաք կափարիչով միասին: Պէտք պիտի ունենաք նաև մկրատներ, թուղթ փակցնելիք, խաւաքարտի երկու բարակ կտորներ, փոքրիկ կանաչ տունկ մը որ տուփին մէջ պիտի ածի:

Այս շաբթուան պատմութեան գլխաւոր նիւթը Սուրբ Ստեփանոսին կատարած գործն է, որ եղաւ առաջին սարկաւագն ու նահատակը: Թելադրեցէք որ ձեր զաւակը պատմէ ծեզի իր մասին:

Կարեւոր կտերեն մէկը այն է, որ Սուրբ Ստեփանոս լաւապէս գիտէր Յին Կտակարանը՝ Աստուծոյ իր ժողովուրդին հետ ունեցած յարաբերութեան պատմութիւնը: Այս գիտութիւնը եւ Աստուծոյ վրայ, ունեցած իր հաւատքը Ստեփանոսը անվախ դարձուցին, նոյնիսկ իր թշնամիներուն դիմաց:

Այս դասին մէջ շեշտը պէտք է դնել այն իրողութեան վրայ, որ երբ վստահութիւն ունինք Աստուծոյ վրայ Սուրբ Յոգիին միջոցաւ, անէն դժուարութիւն կրնանք դիմագրաւել եւ հաւատարին մնալ Աստուծոյ: Ինչ ալ պատահի մեր կեանքին ընթացքին, մենք կը շարունակենք «աւելի մօտենալ» Աստուծոյ: (Այս մասին շարունակեցէք խօսիլ անոնց յաջորդող շաբաթներուն, երբ ձեր բերած տունկը սկսի ածիլ):


Տուփին վերի մասը ծակ մը բացէք, որպէսզի բոյսը ածի, ինչպէս որ ցոյց կը տրուի: Այդ երկու բարակ խաւաքարտները փակցուցէք երկու կողմերը, ինչպէս նկարին մէջ ցոյց կը տրուի: Բոյսը մէջը դրէք եւ ապա տուփը ոտքի վրայ կեցուցած, անոր կափարիչը գոցեցէք:

Փակ տուփը արեւոտ տեղ մը դրէք, կափարիչը հանեցէք երբ պիտի ջրէք զայն:

Պիտի տեսնէք որ բոյսը պիտի ածի դէպի լոյսին ուղղութեամբ, խաւաքարտերուն մէջէն անցնելով, որոնք դժուարութիւնները կը խորհրդանշեն: Ինչպէս որ այդ բոյսը պիտի չարչարուի լոյսին հասնելու, մենք ալ երբեմն նեղութիւններ կը կրենք Աստուծոյ հասնելու մեր ճանրուն մէջ: Աստուծոյ Սուրբ Յոգին մեզի պիտի օգնէ միշտ ու մեր կողքին պիտի ըլլայ, այնպէս ինչպէս Յոգին օգնեց Սուրբ Ստեփանոսին:



Տուփին տեսքը կողմէն, առանց կափարիչի



Կափարիչը որուած վիճակի մէջ